ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ առկա են հետևյալ դիտարկումները.

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում ամրագրված կոռուպցիոն հանցանքների ցանկում՝ 441-րդ «Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» և 549-րդ «Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» հոդվածների անվանումներից հետո ամրագրելով լրացուցիչ պայման՝ «բացառությամբ, երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»: Նախագծի հեղինակները հիմնավորում են նշված առաջարկը այն հանգամանքով, որ այն դեպքում, երբ հիշյալ արարքները կատարվում են ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, դրանք, ըստ էության, կոռուպցիոն բնույթի որևէ հատկանիշ չեն պարունակում:

Առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ կոռուպցիոն հանցագործությունների պարտադիր հատկանիշ կարող է լինել ոչ միայն շահադիտական շահագրգռվածությունը, այլ նաև այլ շարժառիթներ, ինչպես օրինակ՝ անձնական այլ շահագրգռվածությունը և խմբային շահերը:

Նախ, ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցակազմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցանքի շարժառիթները կարող են առհասարակ ամրագրված չլինել հանցակազմում, ինչը, ինքնին, առանձին վերցված, չի վկայում կոռուպցիոն հատկանիշի առկայության կամ բացակայության մասին: Բացի այդ, առհասարակ, Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված չեն կոռուպցիոն հանցանքների հատկանիշները, և Նախագծի հեղինակի պնդումը առ այն, որ կոռուպցիոն հանցագործության պարտադիր հատկանիշներ են շահադիտական շահագրգռվածությունը, բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելը՝ չի բխում ո՛չ իրավական ակտերից, ո՛չ կոռուպցիոն հանցագործությունների հատկանիշների վերաբերյալ ակադեմիական հրապարակումներից: Եվ վերջապես, դասական իմաստով կոռուպցիան դրսևորվում է լիազորությունների չարաշահմամբ, և ինչպե՛ս պրակտիկայում, այնպե՛ս էլ՝ ակադեմիական շրջանակներում ընդունված է համարել, որ լիազորությունների չարաշահումը կարող է տեղի ունենալ ոչ միայն շահադիտական շահագրգռվածությունից, այլ նաև՝ անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով:

Այսպես, պաշտոնեական լիազորությունները շահադիտական շահագրգռվածությունից ելնելով չարաշահելն այն իրավիճակն է, երբ պաշտոնատար անձը հանցանքը կատարում է միայն նյութական օգուտ (նյութական բարիքներ ստանալը, նյութական ծախսերից ազատվելը) ստանալու համար: Անձնական այլ շահագրգռվածության շարժառիթը կարող է

դրսևորվել տարբեր ձևերով՝ կարիերիզմ, հովանավորչություն, ազգականներին, ընկերներին օգտակար լինելու ձգտում, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելը, փոխադարձ ծառայություն ստանալու կամ սեփական աշխատանքում առկա թերություններն ու բացթողումները թաքցնելու ցանկությունը և այլն: Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև ծառայության կեղծ հասկացված շահը, երբ պաշտոնատար անձը արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքն աշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել կուսակցական, կլանային կամ այլ խմբերի շահերը պաշտպանելու ցանկության ձևով:

Ստացվում է, որ, ըստ Նախագծի հեղինակի, եթե պաշտոնատար անձը՝ ազգականին օգտակար լինելու դրդմամբ, օգտագործում է իր պաշտոնեական լիազորությունները ի վնաս պետական շահերի, և այդ արարքն էական վնաս է պատճառում պետության օրինական շահերին՝ նշված հանցանքը չի համարվելու կոռուպցիոն հանցագործություն, ինչը արմատապես հակասում է կոռուպցիայի էությանը, կոռուպցիոն հանցագործությունների առանձնահատկություններին և Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրված կոռուպցիայի դեմ պայքարի հիմնաքարերին:

Բացի վերոգրյալից, քրեական օրենսգրքի 441-րդ և 549-րդ հոդվածների դիսպոզիցիայում «շահադիտական շահագրգռվածությունը և բռնություն գործադրելը, բռնություն գործադրելու սպառնալիքը կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելը» ամրագրված չեն որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ և նշված հատկանիշները ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածում նախատեսելը կհակասի իրավական որոշակիության սկզբունքին, ինչպես նաև նոր խնդիրներ և հարցեր կառաջացնի իրավակիրառ պրակտիկայում՝ կապված այն հանգամանքի հետ, որ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվում են մասնագիտացված մարմինները, իսկ նշված բացառության կիրառման դեպքում խառնաշփոթ կստեղծվի իրավապահ մարմինների միջև քննչական ենթակայության որոշման հարցում:

Առաջարկ

- Նախագծի հոդված 2-ը, որով առաջարկվում է լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում ամրագրված կոռուպցիոն հանցանքների ցանկում՝ հանել:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն